

**ՔԱՐՈՉ՝ «ՏԷՐ, ՏԱՆԴ ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓԱՌՔԻԴ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ
ՎԱՅՐԸ ՍԻՐԵՑԻ»¹ ԽՕՍՔԻՆ ՍԱՍԻՆ**

Սկիզբը՝ թիւ Ե.

Իսկ երրորդ «տունը» դրախտը կը կոչուի: Ասիկա եւս բազմաթիւ վայելչութիւններ ունի:

Նախ՝ որովհետեւ դրախտին դիրքը երկինքին ու երկրին միջեւ է, այսինքն՝ արեգակի գունդի լոյսէն աւելի վեր: Այդ պատճառով վայել էր մարդու բնակութեան, քանի որ իր նման ստեղծուեցաւ, ինչպէս մարդը՝ հոգիէ ու մարմինէ:

Երկրորդ՝ որովհետեւ իմանալի տուններով բազմացաւ, ինչպէս Տէր Ներսէսը երգին մէջ կ'ըսէ. «Իմանալի տունկեր տնկեց»², քանի որ ամենեւին զգալի չէ, ինչպէս այս պտուղները:

Երրորդ՝ քանի որ անոր վայրերն անապական են, եւ Ադամէն յայտնի է, որովհետեւ, երբ Ադամ մեղքի բնութեամբ ապականեցաւ, չկրցաւ այնտեղ մնալ, թերեւս մեղքերու մէջ անապական մնացած ըլլար, ինչպէս Աստուած կ'ըսէր³:

Չորրորդ՝ որովհետեւ դրախտին պտուղներն անծորելի են, նաեւ իր տերեւները, քանի որ ծառերուն պտուղներէն տաք ու ցուրտ կը ծորի, իսկ այնտեղ ասիկա չկայ, այդ պատճառով ալ անծորելի է:

Հինգերորդ՝ քանի որ միշտ համեղ ու անսպառ կը մնայ, ինչպէս լոյսը՝ աչքերուն, եւ խօսքը՝ ականջներուն, իսկ գործերը՝ սիրտին մէջ:

Վեցերորդ՝ որովհետեւ իր ծառերն ու տերեւները եւ անոնց պտուղները լուսաւոր են, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Ադամ տեսաւ, որ գեղեցիկ էր տեսողութեան համար եւ հաճելի աչքերուն՝ նայելու համար»⁴:

Եօթներորդ՝ քանի որ անմահացուցիչ պտուղներով լեցուն էր, ինչպէս Աստուած կ'ըսէր. «Թերեւս ձեռքը երկարէ եւ կեանքի ծառէն առնէ»⁵:

¹ Սաղմ. ԻԵ. 8:

² Ծննդ. Գ. 22: Տէն Շարական, Սուրբ Ներսէս Շնորհալի, երրորդ օրուան համար երգ.... «Էական բանն», Վաղարշապատ, 1888, էջ 440:

³ Հմմտ. Ծննդ. Բ.:

⁴ Հմմտ. Ծննդ. Գ. 6:

⁵ Ծննդ. Գ. 22:

Ութերորդ՝ որովհետեւ զանազան եւ տեսակ-տեսակ պատուներով լեցուն էր, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Դրախտին մէջ եղող գիտութեան ծանէն ու բոլոր ծառերէն ուտելով պիտի ուտիք»⁶:

Իններորդ՝ քանի որ աղբիւրներով կ'ոռոգէր զայն, ինչպէս կ'ըսէ. «Եղեմէն աղբիւր կ'ելլէր ու դրախտը կ'ոռոգէր»⁷:

Տասներորդ՝ որովհետեւ Աստուած անոր մէջ կը շրջէր, ինչպէս կ'ըսէ. «Լսեցին Աստուծոյ ռաբբուն ձայնը, որ դրախտին մէջ կը պտըտէր»⁸:

Ադամ այս բոլորը կորսնցուց, այդ պատճառով մարգարէն կ'ըսէ. «Տէ՛ր, տամդ վայելչութիւնը սիրեցի»:

Իսկ չորրորդ «տունը», որ Մովսէսին խորանն է, բազմաթիւ վայելչութիւններ ունէր:

Նախ՝ քանի որ Աստուծոյ առաջին տունը որպէս՝ երկրի վրայ կազմուեցաւ, ինչպէս յայտնի է Աստուածաշունչ գիրքերէն:

Երկրորդ՝ որովհետեւ անհամեմատելի էր, քանի որ իր նման տուն չշինուեցաւ:

Երրորդ՝ որովհետեւ շինութեան ճարտարապետն Աստուած էր, որ Հոգին տուաւ Բեսելիէլին⁹ եւ Ելիաբին, եւ Մովսէսին ցոյց տուաւ լեռան վրայ, ինչպէս Ելբին մէջ կը պատմուի:

Չորրորդ՝ քանի որ զանազան կերպերով դրոշմուած եւ ձեւաւորուած էր՝ քերովբէներ ու արմաւենիներ, որմէ սորվելով՝ մարդիկ թագաւորներուն տուները այդպէս կը կազմեն, ինչպէս նաեւ իրենց խորանները:

Հինգերորդ՝ որովհետեւ զանազան նիւթերէ եւ գոյներէ ձեւաւորուած էր. կապոյտէ, ծիրանիէ, բեհէզէ, այսինքն՝ կարմիրէ եւ որդանէ:

Վեցերորդ՝ քանի որ բազմաթիւ ոսկիով ու ակերով զարդարուած էր, ինչպէս որ տապանակը, քերովբէներն ու այլ բաները ոսկիով ու արծաթով պատեց¹⁰:

Եօթներորդ՝ որովհետեւ աստուածային կտակներուն տապանակը այնտեղ էր, ինչպէս նաեւ ոսկեայ բուրվառը՝ մանանայով լեցուն¹¹:

⁶ Ծննդ. Բ. 16–17:

⁷ Ծննդ. Բ. 10:

⁸ Տէս Ծննդ. Գ. 8:

⁹ Տէս Ելբ ԼԱ. 2, ԼԵ. 30:

¹⁰ Տէս Ելբ ԻԵ. 10–32:

¹¹ Տէս Գ. Թագ. է. 50, Եբր Թ. 4:

Ութերորդ՝ քանի որ Մովսէս այնտեղ կը նստէր լուսաւոր դէմքով, եւ անոր երեսին վրայ քօղ դրուած էր¹²:

Իններորդ՝ որովհետեւ այդտեղ դատաստան ու իրաւունք կ'ըլլար Տիրոջմէ, ինչպէս յայտնի է Աստուածաշունչ Գիրքէն:

Տասներորդ՝ քանի որ Աստուած այնտեղ կ'երեւար ու կը խօսէր Մովսէսին եւ Ահարոնին հետ: Այդ պատճառով Դաւիթ մարգարէն սիրեց ու ըսաւ. «Տէ՛ր, տանդ վայելչութիւնը սիրեցի»:

Իսկ հինգերորդ «առում» կը կոչուէր Սողոմոնին տաճարը, որ նաեւ բազմաթիւ վայելչութիւններ ունէր:

Նախ՝ որովհետեւ Աստուած այդ ժամանակաշրջանը խաղաղեցուց, այդ տաճարին շինութեան համար, ինչպէս կ'ըսէ Թագաւորութիւններուն Գիրքը, Թէ՛ «Տէրը Սողոմոնին դիմացէն բոլոր պատերազմները վերացուց»¹³:

Երկրորդ՝ քանի որ հեթանոսները ծառայեցին անոր շինութեան համար, ինչպէս Քիրամը¹⁴, որ փայտը տուաւ, իսկ փարաւունը՝ արծաթ¹⁵, եւ Սողոմոն բոլոր Թագաւորութիւններէն պատիւ ստացաւ:

Երրորդ՝ որովհետեւ շինուածքը պատուաւոր էր, վերնատունը՝ սրբութիւն սրբութեանց, իսկ միջնատունը՝ տաճարը, իսկ ներքնատունը՝ սրահը, նման՝ երկիրքին, երկրին ու դրախտին:

Չորրորդ՝ քանի որ Աստուծոյ օրէնքներուն վայր էր, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Աստուծոյ օրէնքը Իր տան մէջ է»¹⁶:

Հինգերորդ՝ որովհետեւ ոսկեայ բուրվառն ու մանանան այնտեղ կը դրուէր ոսկի սափորով, այլեւ՝ Ահարոնին գաւազանը¹⁷:

Վեցերորդ՝ քանի որ այնտեղ էին պինդ ու խորհրդաւոր սեղանները, որ հացը կը դնէին բաղարջ ու գառնուկ, եւ որու մէջ խունկերը կ'աղային եւ այլ բաներ:

Եօթներորդ՝ որովհետեւ այնտեղ Տիրոջ հաճութեան համար ողջակէզներ ու զոհեր կը մատուցուէին:

Ութերորդ՝ քանի որ իւրաքանչիւր տարի ամբողջ Իսրայէլն այնտեղ երեք անգամ կը հաւաքուէր կատարելու համար Զատիկի, Տաղաւարահարացի եւ Քաւութեան տօները¹⁸:

¹² Տէս Բ. Կորնթ. Գ. 13:

¹³ Տէս Գ. Թագ. Ե. 1–18:

¹⁴ Տէս Բ. Թագ. Ե. 11, Ա. Մնաց. ԺԴ. 1:

¹⁵ Հմմտ. Ա. Մնաց. ԻԹ. 4:

¹⁶ Հմմտ. Երեմ. Ը. 8:

¹⁷ Տէս Ելք է. 10:

¹⁸ Տէս Ելք ԻԳ. 26–44:

Իններորդ՝ որովհետեւ այնտեղ կ'երգէին Դաւիթի սաղմոսներուն երգերը՝ խումբ-խումբ եւ զանազան եղանակներով, ինչպէս Կորնի¹⁹, Դաթանի²⁰ որդիները եւ ուրիշներ, որոնք Դաւիթի [ցեղին] պարագլուխներն էին:

Տասներորդ՝ քանի որ քահանայապետն այնտեղ կը հագուէր սրբութեան զգեստը, վասակը, խոյրը եւ զարդարուած պճղնաւորը, որ տառուան մէջ մէկ անգամ կ'արժանաւորուէր ըստ Պօղոսի²¹:

Տասնմէկերորդ՝ որովհետեւ այնտեղ կը քաւուէին ժողովուրդին բոլոր մեղքերը:

Տասներկրորդ՝ անդրանիկներն ալ այնտեղ կը նուիրէին եւ ունեցուածքին մէկ մասը, պատարագներն ու ողջակէզները, այդ պատճառով մարգարէն ցանկաց' ըսելով. «Տանդ վայելչութիւնը սիրեցի»:

Իսկ վեցերորդ «տուն» կը կոչուի Մարիամ Աստուածածինը, եւ որովհետեւ ասիկա գերապանծ տուն է, քան բոլոր տուները, որ առաջ էին եւ որ յետոյ պիտի ըլլան: Ասոր վայելչութիւնները բազմաթիւ են:

Նախ՝ մարդկային բնութենէն ըլլալով՝ ազատ էր մարդկային տկարութիւններու բոլոր կիրքերէն, այսինքն՝ բոլոր մեղքերէն, այդ պատճառով ալ Աստուծոյ «տուն» կոչուելու արժանացաւ Սուրբ Կոյսը:

Երկրորդ՝ որովհետեւ մեր բնութենէն միաւորեցաւ աստուածային բնութեան, որով բոլոր տուներէն գերագոյն գտնուեցաւ՝ ըստ այնմ. «Բաւնը մարմին եղաւ»²²:

Երրորդ՝ քանի որ ասիկա բանական եւ կենդանի տաճար էր Աստուծոյ, սակայն ասիկա մարմնաւորներէն ըլլալով՝ Աստուծոյ «տուն» եղաւ՝ ըստ մարգարէին, թէ՛ «Աստուծոյ տաճար էք», ինչպէս Աստուած ըսաւ, թէ՛ «Անոնց պիտի երթամ ու անոնց մէջ պիտի բնակիմ»²³:

Չորրորդ՝ որովհետեւ Աստուծոյ մայր եղաւ եւ Աստուածածին անուանուեցաւ, քանի որ Անեղն ինքն իր մէջ կրելով եւ ծնելով՝ մայր եղաւ Անմայրին եւ Անսկզբնականին՝ մարդեղութեան սկիզբ:

Հինգերորդ՝ քանի որ անկերակրելին զԱստուած կերակրեց իր ստինքներով, եւ իբրեւ մանուկ գգուեց իր գիրկին մէջ անշափելի Աս-

¹⁹ Տէս Ա Մնաց. Թ. 19, ԻԶ. 1:

²⁰ Տէս Թուեր ԺԶ.:

²¹ Հմմտ. Եբր. Թ. 12:

²² Յովհ. Ա. 14:

²³ Հմմտ. Բ. Կորնթ. Զ. 16:

տուածը ու համբուրեց դէմքը, Որմէ սերովբէններն իրենց երեսները իրենց թեւերով կը ծածկէին՝ ըստ այնմ. «Երկուքը կը ծածկէին»:

Վեցերորդ՝ որովհետեւ անխախտելի կուսութեամբ ծնաւ, որ մարդկային բնութենէն օտար է, քանի որ մայր եւ Կոյս եղաւ: Մայր, որովհետեւ զԱստուած ստուգապէս ծնաւ, եւ Կոյս, քանի որ առանց այր մարդու եւ կուսութեամբ ծնաւ անապական:

Եօթներորդ՝ որովհետեւ ծնելէն ետք կոյս մնաց ու անխառն, այս եւս գովելի է շատերէն:

Ութերորդ՝ քանի որ Սուրբ Հոգիին գալուստով մաքրուեցաւ եւ Հայր Աստուածը հովանաւորեց, այսինքն՝ բանսարկուին բոլոր արկածներէն պահեց:

Իններորդ՝ որովհետեւ վաթսուն տարիներ զարմանալի առաքինութեամբ ապրեցաւ աշխարհի վրայ, ինչպէս վայել է Աստուծոյ մօր:

Տասներորդ՝ քանի որ Ամենօրհնեալը իր Որդիին ձեռքերուն մէջ աւանդեց իր հոգին, որովհետեւ Բանն Աստուածը եկաւ Իր մօր հոգիին համար:

Տասնմէկերորդ՝ քանի որ իր ծնած ժամանակ աւետիսով ծնաւ, եւ թագաւորական ու քահանայական ցեղէ ըլլալով՝ իրեն միաւորեցաւ²⁴:

Տասներկրորդ՝ որովհետեւ մայր Եւայի համար ճարտար բժիշկ եղաւ՝ անոր խոցուածները հանելով, քանի որ ինչպէս առաջին մօր պատճառով՝ մահ, իսկ երկրորդ մօր պատճառով կեանք եւ անմահութիւն եղաւ:

Տասներեքերորդ՝ որովհետեւ սկիզբն ու հիմքը եղաւ նոր օրէնքին, այլեւ Մովսէսի տապանակին կատարումը, եւ բուրվառներու աստուածային խունկերուն:

Տասնչորրորդ՝ բոլոր մարգարէներու ըսածներուն լրումը եղաւ, քանի որ անոր վրայ կատարուեցան բոլոր գրուածները, որ Աստուծոյ օրէնքներուն մէջ էին:

Տասնհինգերորդ՝ որովհետեւ մեր բնութենէն միջնորդ ու բարեխօս ունինք Աստուծոյ մօտ, որ մեր բոլոր մեղքերը կը քաւէ ու կը ջնջէ իր կուսութեան սրբութեան միջոցով:

Տասնվեցերորդ՝ քանի որ առանց տղամարդու յղացաւ, եւ Աստուած Բանը իր արգանդին մէջ պահեց ինն ամիս եւ հինգ օր:

²⁴ Տէս Մատթ. Ա. 1–17:

Տասնեօթներորդ՝ որովհետեւ ան իր Որդիին բոլոր խորհուրդներուն ու տնօրինութիւններուն գիտակ էր, ինչպէս Աւետարանը կ'ըսէ. «Մա-
րիամ բոլոր այս ըսուածները միտքը կը պահէր եւ անոնց վրայ կը խոկար»²⁵:

Տասնութներորդ՝ քանի որ մարմինով երկինք համբարձաւ, ու հոգին ու մարմինը միասին են, եւ ընկալուած է որպէս յարութեան առհաւատ-
չեայ՝ մեր հաւատքի հաստատութեան համար:

Տասնիններորդ՝ որովհետեւ իր Որդիին հետ դասուած է ան-
ճառելի փառքին ու անտրտում ուրախութեան մէջ՝ եօթնարփեան
խորաններն անցած:

Քսաներորդ՝ քանի որ իր Միածին Որդիին հետ պիտի գայ Անոր երկ-
րորդ գալուստին եւ իր տօնը կատարողներուն համար բարեխօս է: Իսկ
եթէ կ'ուզես անոր թաղման պատմութիւնը՝ առաքեալներէն ա՛ռ:

Դաւիթ, այս բոլորը մարգարէական հոգիով տեսնելով, կը գոչէր.
«Տէ՛ր, տանդ վայելչութիւնը սիրեցի»:

Իսկ եօթներորդ «տուն» կը կոչուին աստուածընկալ խաչն ու կենսու-
նակ գերեզմանը, եւ ասոնք գերազանց վայելչութեամբ զարդարուած են:

Նախ՝ որովհետեւ մահուան փայտը, որու վրայ չարագործները կը
սպաննուէին, կեանքի բնակարան եղաւ՝ ըստ այնմ. «Բոլորին կեանքի
փայտ (ծառ) է»²⁶:

Երկրորդ՝ քանի որ փայտէն կախուածը կ'անիծէին՝ ըստ օրէնքին.
«Անիծեալ ըլլայ ան, որ փայտէ կը կախուի»²⁷, իսկ որ խաչէն կախուեցաւ,
Ադամի անէծքը վերցուց եւ ամբողջ բնութեան օրհնութիւն շնորհեց:

Երրորդ՝ որովհետեւ առաջին ծառին միջոցաւ մահը տարածուե-
ցաւ մարդկութեան վրայ, իսկ խաչին միջոցաւ կեանք տուաւ Ադամին
ու անոր որդիներուն՝ ըստ այնմ. «Ձեր կեանքը փայտէն կախուած պիտի
տեսնէք»²⁸:

Չորրորդ՝ քանի որ իւրաքանչիւր ոք իր թշնամիին գաւազանով կը
զարնէ ու կը սպաննէ, այսպէս ալ մեր Տէրը խաչով խոցեց բանսարկուն
ու սպաննեց զինք ու անոր հետ՝ մահն ու մեղքը:

Հինգերորդ՝ որովհետեւ այն Աստուծոյ զօրութիւնն է, ինչպէս առա-
քեալը կ'ըսէ. «Խաչին մասին փառաբանութիւնը կորուստի մէջ եղողներուն հա-

²⁵ Դուկ. Բ. 19:

²⁶ Առակ. Գ. 18:

²⁷ Բ Օր. ԻԱ. 23:

²⁸ Հմմտ. Բ. Օր. ԻԸ. 66:

մար յիմարութիւն է, իսկ փրկուածներուն համար՝ զօրութիւն»²⁹, քանի որ թէեւ Անոր բոլոր տնօրինութիւնները մեր փրկութեան համար եղան, սակայն խաչով յաւիտենական մահէն ազատեցանք, որմէ ո՛չ ոք կրնար փրկել՝ բացի Աստուծոյ զօրութենէն, որ է խաչը:

Վեցերորդ՝ քանի որ կրկնակի դուռերու բանալի եղաւ՝ դժոխքին եւ Արքայութեան, որովհետեւ դժոխքին դռներն անով քակեց՝ ըստ մարգարէին. «Քանի որ պղնձէ դռները փշրեց եւ երկաթէ նիզերը խորտակեց»³⁰, որ է մեղքը եւ սատանային բռնութիւնը, ուստի ազատեց գերիները՝ ըստ այնմ. «Աւար առաւ, պարգեւներ բաշխեց, Արքայութեան դուռը բացաւ եւ Ադամը իւրայիններով մտցուց»³¹: Եւ յայտնի է աւազակէն, որ ըսաւ. «Այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ»³²:

Եօթներորդ՝ որովհետեւ Քրիստոսի խաչը հաւատացեալներուն պարծանքն է, ինչպէս Պօղոս կ'ըսէ. «Գալով ինձի, քա՛ւ լիցի, որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ՝ ուրիշ բանով պարծենամ»³³, ինչ բանը պատճառ է, որ իւրաքանչիւր ոք իր փրկիչով պարծենայ: Եւ յայտնի է, թէ խաչին միջոցաւ բոլոր վտանգներէն փրկուեցանք:

Ութերորդ՝ քանի որ այն միսիթարական ցուպ ու գաւազան է, որ մեզ բոլոր տրտմութիւններէն միսիթարեց, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Ցուպդ եւ գաւազանդ, անոնք պիտի մխիթարեն...»³⁴, որ է կրկնակի մեր Քրիստոս Աստուծոյ խաչին փայտը:

Իններորդ՝ որովհետեւ այն Աստուծոյ սեղանն է, ուր հաշտութեան Գառը զենուեցաւ Հօր հետ հաշտութեան համար եւ մեզի որպէս չսպառող կերակուր տրուեցաւ՝ ըստ այնմ. «Իմ առջեւ սեղան պատրաստեցիր»³⁵:

Տասներորդ՝ քանի որ Ասոր համար գուշակեցին առաջին մարգարէները, որոնց էր Նոյին քառակուսի տապանը, Իսահակին ողջակիզութեան փայտը, Մովսէսին ցուպը, որ ծովը ճեղքեց³⁶, Ահարոնին գաւազանը, որ ծաղկեցաւ³⁷, Ուխտի քառակուսի տապանակը³⁸, Եսայիին տեսիլքը՝

²⁹ Ա. Կորնթ. Ա. 18:

³⁰ Տէս Ես. ԽԵ. 2:

³¹ Հմմտ. Սաղմ. ԿԷ. 19:

³² Ղուկ. ԻԳ. 43:

³³ Գաղ. Զ. 14:

³⁴ Սաղմ. ԻԲ. 5:

³⁵ Սաղմ. ԻԲ. 6:

³⁶ Տէս Ելք ԺԴ. 1–31:

³⁷ Թիւք ԺԷ. 8:

³⁸ Տէս Ելք ԻԵ. 22, ԼԴ. 29:

աթոռին նստած³⁹, եւ միւս բոլորն այստեղ կատարուեցան, որու ցանկալով՝ մարգարէն կ'ըսէ. «Տէ՛ր, տանդ վայելչութիւնը սիրեցի»⁴⁰:

Իսկ աստուածատունկ գերեզմանը Աստուծոյ Բանին «տուն» եղաւ բազմաթիւ կերպերով:

Նախ՝ որովհետեւ ինչպէս Կոյսին արգանդը, [այս եւս] իր մէջ պարփակեց Աստուած Բանը երեք օր եւ երեք գիշեր:

Երկրորդ՝ քանի որ Աստուծոյ Բանին համար ճանապարհ եղաւ սանդարամետները մտնելու:

Երրորդ՝ որովհետեւ Աստուծոյ Բանին համար հանգստութիւն եղաւ չարչարանքներու ժամանակ՝ ըստ Յոբին. «Մարդուն մահը հանգստութիւն է»⁴¹:

Չորրորդ՝ նախահայրերուն ոսկորները, որ գերեզմաններու մէջ կապեց, Բանն Աստուածը զանոնք իր վրայ կրեց, որպէսզի զերծ պահէ զանոնք չարչարանքներէն, քանի որ մինչեւ այդ ատեն չարչարանքներու մէջ էին:

Հինգերորդ՝ որովհետեւ գերեզմանի հողին աստուածային շնորհ տուաւ, որպէս թէ ինք միշտ այնտեղ ըլլայ՝ աստուածապէս ներգործելով, ինչպէս յայտնի է, Անոր գերեզմանէն այն օրէն մինչեւ մեր օրերը, ինչպէս բոլոր ազգերէն, Անոր գերեզմանը պատիւ կ'ընդունի:

Վեցերորդ՝ քանի որ հողին ծանրութիւնը, որ մեզ վրայ կը դրուի՝ թեթեւցուց, ինչպէս մարգարէն ալ կ'ըսէ. «Ձորի խիճերը քաղցր պիտի թոփն, կարն ժամանակ մը այնտեղ պիտի ննջենք, սակայն շուտով յարութիւն պիտի առնենք»⁴²:

Եօթներորդ՝ որովհետեւ անկէ շուտով յարութիւն առաւ՝ անապական կնիքը պահելով, ուրկէ կը հաստատուի մօր կուսութիւնը, թէ՛ անոր կուսութիւնը անապական է:

Ութերորդ՝ քանի որ գերեզմանը Տէրը կրելով՝ մեր մեռելութիւնը վերցուց, որ մեղքերու մէջ ըլլալով՝ որպէս թէ գերեզման կը դրուինք:

Իններորդ՝ որովհետեւ անոնք, որոնք գերեզմաններու մէջ էին, Իր յարութիւն առած ժամանակ Իր հետ պիտի յարուցանէ, ինչպէս Աւետարանը կ'ըսէ. «Գերեզմանները բացուեցան, եւ բազմաթիւ մարմիններ յարութիւն առին»⁴³:

³⁹ Տէս Ես. 9. 1:

⁴⁰ Սաղմ. ԻՅ. 8:

⁴¹ Յովբ. Գ. 22:

⁴² Հմմտ. Յովբ. ԻԱ. 32:

⁴³ Տէս Մատթ. Իէ. 51–52:

Տասներորդ՝ քանի որ այն կէտի փորին օրինակն է, որ Յովնանին երեք օր եւ երեք գիշեր կրեց⁴⁴, եւ մարգարէութիւնը կատարուեցաւ, թէ՛ «Զիս գութին մէջ դրին»⁴⁵: Տակաւին, բանտարկեալներուն խաւարը ցրուեց, եւ մեծ լոյս ծագեցաւ անոնց եւ նախահօր ոսկորներուն, որ այնտեղ թաղուած էին, մօտենալով առողջացուց, այդ պատճառով կ'ըսէ. «ՏԷՐ, սիրեցի վայելչութիւնը»:

Իսկ ութերորդ «տուն» կը կոչուին հեթանոսներուն եկեղեցիները, որոնք յանուն Քրիստոսի կը շինուին: Այս եւս գերագոյն վայելչութիւն ունի:

Նախ՝ որովհետեւ խաչին վրայ Տէրը մէկ անգամ պատարագուեցաւ, որով Ան տուն կոչուեցաւ: Իսկ այստեղ միշտ անսպառելի կերպով ամեն օր կը պատարագուի, ուրկէ բոլոր հոգեւորապէս անօթինները կը կերակրուին, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Եկե՛ք եւ Իմ հացէս կերե՛ք ու կշտացե՛ք»⁴⁶: Իսկ Տէրը կ'ըսէր. «Ան որ այս հացէն ուտէ, յաւիտեան պիտի ապրի»⁴⁷:

Երկրորդ՝ քանի որ ախտի մէջ ծնած մարդիկը դարձեալ կը ծնի որպէս Աստուծոյ որդիներ՝ ըստ աստուածային օրէնսդրութեան շինելով: Իսկ առաքեալը կ'ըսէ. «Քրիստոսի միանալով որ մկրտուեցա՛մ, այլեւս զՔրիստոս զգեցած եմ. ասկէ ետք ժառանգորդ եմ եւ ժառանգակից Քրիստոսի»⁴⁸:

Երրորդ՝ որովհետեւ մեղաւորները Քրիստոսի շնորհքով կ'արդարացնէ, ինչպէս առաքեալը կ'ըսէ, թէ՛ «Եթէ խոստովանիմք, ապա Ան հաւատարիմ ու արդար է՝ մեր մեղքերը ներելու»⁴⁹:

Չորրորդ՝ քանի որ երկու օտար անձեր իրարու կը կապէ՝ մէկ անձ ըլլալով՝ ըստ այնմ. «Երկուք մէկ մարմին պիտի ըլլան»⁵⁰, եւ թէ՛ «Այն, որ Աստուած միացուց, մարդ թող չի՛ բաժնէ»⁵¹:

Հինգերորդ՝ որովհետեւ օր օրի Քրիստոսի փոխանորդ կը կարգէ, քահանաներ, եպիսկոպոսներ, կաթողիկոսներ, ըստ ժամանակի եւ ըստ արժանաւորութեան՝ սպասաւորներ կը յօրինէ:

⁴⁴ Յովն. Բ. 1:

⁴⁵ Սաղմ. Զէ. 7:

⁴⁶ Հմմտ. Առակ. Թ. 5:

⁴⁷ Յովհ. Զ. 52:

⁴⁸ Գաղ. Գ. 27:

⁴⁹ Տէս Ա. Յովհ. Ա. 9:

⁵⁰ Մատթ. ԺԹ. 5:

⁵¹ Մատթ. ԺԹ. 6, Մարկ. Ժ. 9:

Վեցերորդ՝ քանի որ ասիկա մեր մէջ եղող բոլոր փափաքները կ'անցընէ. դրախտինը, Մովսէսի խորանինը եւ Աբրահամի տաղաւարինը, այլեւ՝ Երկինքի Արքայութեանը: Որովհետեւ անոնք ասոր օրինակներն էին, իսկ ասիկա՝ ճշմարտութիւն [որպէս] բացայայտուեցաւ:

Եօթներորդ՝ քանի որ մեռելներուն հոգիները դժոխքէն կը թափէ եւ Երկինքի Արքայութեան կ'արժանացնէ՝ հաշտարար պատարագին միջոցաւ:

Ութերորդ՝ մեր աղօթքները որպէս ընդունելի պատարագ կը մատուցէ Աստուծոյ՝ երէկուանը, վաղուանը եւ բոլոր օրերունը՝ ըստ այնմ. «Ես Աստուծոյ աղաղակեցի», եւ թէ՛ «Այստեղ օրհնեցէ՛ք Տիրոջը»⁵²:

Իններորդ՝ որովհետեւ ասիկա երկնային պալատ է՝ միշտ խաղաղութիւն ընձեռելով մեզի եւ պատուհասը վերցնելով, որ մեղքերու պատճառով աշխարհի վրայ կու գան: Հայրն Աստուած, այստեղ տեսնելով Իր խոցուած Միածինը, կը խնայէ մեզ, իսկ երբ չուզէր ողորմիլ, նախ եկեղեցիները կը քակէ, որպէսզի այնտեղ գալով՝ Իր տունը միջնորդ չընեն, ու ներէ զանոնք՝ ըստ մարգարէին. «Իմ տունէս պիտի սկսիմ»⁵³:

Տասներորդ՝ քանի որ Հոգիին Եօթնեակի շնորհներն այստեղ կը պարգեւուին մեզի, ինչպէս Վերնատան մէջ՝ առաքեալներու դասուն, ինչպէս Պօղոսն ալ կ'ըսէ⁵⁴: Որովհետեւ ասոր վրայ մարգարէութիւններ կը կատարէ, առաքեալներ կը յայտնէ, թարգմանիչներ մէջտեղ կը բերէ, լեզուագէտներ կը դարձնէ, վարդապետներ կը յօրինէ, իմաստուն կ'ընէ եւ ճշմարտութեան թշնամին կը կորսնցնէ:

Տասնմէկերորդ՝ ասոր մէջ են Հոգիէն խօսուած աստուածային բոլոր խօսքերը, առաքելականները, մարգարէականները եւ անոնց զանազան մեկնութիւնները:

Տասներկրորդ՝ տակաւին ասոր դիրքն ալ վայելուչ է, որովհետեւ եկեղեցւոյ քառանկիւնն է: Չորս աւետարանիչները կը նշանակեն աշխարհի չորս կողմերը, հաստատուած չորս տարրերը եւ մարդուն չորս առաքինութիւնները: Իսկ մեր դէմքը դէպի արեւելք՝ մեր փափաքն է, որ մեր հայրենիքը ու մեր Տիրոջ գալուստին կը սպասենք, որ արեւելքէն պիտի ըլլայ: Իսկ Երկինքի կամարներուն նմանելով՝ ըստ մարգարէին. «Երկիմբը որպէս խորան փաշեցիր»⁵⁵: Իսկ սիւները՝ առաքեալները,

⁵² Հմմտ. Սաղմ. ՃԼԳ. 1:

⁵³ Հմմտ. Ես. ԽԱ. 27:

⁵⁴ Տէս Գործք. Ի. 7–8:

⁵⁵ Տէս Սաղմ. ՃԳ. 2:

մարգարէները եւ պաշտօնեաներուն սրբութիւնը: Գմբէթը բարձրացած հաւատքը կը նշանակէ: Իսկ խաչը՝ եկեղեցւոյ հաւատացեալներուն շար- շարանքները, եւ թէ խաչին միջոցաւ երկինք կ'ելլենք, ինչպէս նաեւ խա- չուածին հաւատացողներն ենք: Ողորկ եւ քով-քով շարուած քարերը՝ հրեշտակներուն զանազան դասերը, կոյսերը եւ միւսները կը նշանա- կեն, որոնք արդարացած կ'ըլլան Քրիստոսի մէկ մարմինին: Իսկ կիրքն ու խիճերը՝ անոնց սէրը եւ բարի գործերը կը նշանակեն, որով եկեղեցին կը շինուի: Լուսատուները արեւելքէն ու արեւմուտքէն, Բանին էջքը կը նշանակեն, իսկ մեր լսելիները, որ անոր արեւմուտքն ենք, այլեւ՝ կոյ- սին արգանդին օրինակը: Տակաւին, հիւսիսային եւ հարաւային լուսա- տուները բոլոր սուրբերուն տեսութիւնը՝ ի Քրիստոս կը նշանակեն: Իսկ խորհրդանոցները կրկին առաքեալներն ու մարգարէները կը նշանա- կեն, որոնք ծածկաբար ունէին եւ յետոյ յայտնուեցան: Տակաւին, իրա- րու դէմ դիմաց եւ երկուքը, որ սեղանին կը նային, անոնց խօսքը կը նշանակեն, որ Քրիստոսի համար խօսեցան, այլեւ՝ կոյսին արգանդը եւ Աստուծոյ ծոցը կը նշանակէ, այդ պատճառով ալ միշտ ծածկուած են: Սեղանը Գողգոթան կը նշանակէ: Սկիզբ՝ գերեզմանը: Գորբորան՝ պա- տանքները: Մաղզման՝ գերեզմանին կափարիչը: Սեղանին ծածկոցնե- րը՝ Սուրբ Հոգիին եօթը շնորհքները կը նշանակեն, որ եկեղեցւոյ մէջ կը ներգործէ: Տակաւին անոնց զանազան գոյները, Սուրբ Հոգիին զա- նազան եւ պէս-պէս զօրութիւնը կը նշանակեն: Բեմը՝ երկինքի նման եւ սրբութիւն սրբութեանցը, իսկ վերնատունը՝ տապանին, այդ պատճա- ռով քահանաները սեղանին չորս կողմը՝ սերովբէներուն նման, որոնք Աստուծոյ չորս կողմն են: Իսկ եկեղեցիին մէջը՝ տաճարին միջնատու- նը, եւ տապանը եւ լուսաւորները: Դպիրները՝ տէրութեան դասերուն եւ ողջախոհներուն նմանող, ինչպէս քահանաներն ու կոյսերը: Ժամատու- նը՝ աշխարհին նման, իսկ ներքնատունը՝ տապանին ու Սողոմոնի սրա- հին: Ժողովուրդը՝ հրեշտակներու դասերուն եւ ապաշխարողներուն: Քահանային զգեստը՝ Ահարոնին պճղնաւորը կը նշանակէ⁵⁶: Շուրջա- ուր՝ Քրիստոսի կարմիր քղամիզը կը նշանակէ, որ Պիղատոսը հագցուց Անոր⁵⁷: Բազպանները՝ Քրիստոսի ձեռքերուն կապերը: Ուրարը՝ չուանը, որ Քրիստոսի վիզին գրին, եւ լուծը, որ Ինք օրինադրեց: Գօտին՝ ըստ

⁵⁶ Տէս Ելք ԻԵ. 7:⁵⁷ Տէս Մատթ. ԻԷ. 28:

օրէնքին. «Ձեր գօտիները ամուր կապուած ըլլամ», եւ՝ «Շտապ կերէ՛ք, որովհետեւ Տիրոջ գառիկն է»⁵⁸: Սպիտակ շապիկը՝ Քրիստոսի վերարկուն օրինակն է, որ Հերովդէսը հագցուց Անոր: Շապիկին առջեւի կողմի կարմիրը՝ արեան կարմրութիւնը, որ խաչին վրայ [հոսեցաւ], որ համբարձումի ժամանակ հրեշտակները կը հարցնէին. «Ինչո՞ւ համար հագուամներդ կարմիր են»⁵⁹, իսկ կապոյտը՝ հետքը կը ցուցնէ, թէ Տէրը կապոյտ օղով անցած է եւ Հօր աջ կողմը նստած է, որ երկինքի մէջ եւս այս հետքը մնացած է: Գրականները Մովսէսը կը նշանակեն ու անոր երկու տախտակները, որովհետեւ անոր վրայ կը կարդացուն Աստուծոյ օրէնքներուն բոլոր գրութիւնները: Վառած մոմերը մեր հաւատքը կը նշանակեն: Բուրվառը՝ Սուրբ Կոյսը: Կրակը՝ Բանն Աստուածը: Բոժոժները՝ առաքեալները: Բոժոժներուն ձայնը՝ առաքեալներուն քարոզութիւնը: Քոյրները քերովքէները կը նշանակեն, որոնք քաւութեան վրայ հովանի էին: Աւազանը եկեղեցւոյ արգանդն է, որով Աստուծոյ որդիներ կը ծնին: Մեռունը Սուրբ Հոգին կը նշանակէ: Խաչը՝ հաւատացեալներուն նեղութիւնները, որոնք աշխարհի մէջ են: Աւետարանը զՔրիստոս կը նշանակէ, իսկ ծածկոցը՝ մեր սրբութիւնը: Կանթեղները Քրիստոսի սպասաւորները կը նշանակեն, իսկ միշտ վառած ըլլալը անոնց շատ ժրութիւնն ու արթնութիւնը կը նշանակէ: Եկեղեցւոյ դռները զՔրիստոս կը նշանակեն՝ ըստ Իր խօսքին. «Ե՛ս եմ ոչխարներուն դուռը»⁶⁰. իսկ [դռներուն] նախշերը Քրիստոսի զանազան սրբութիւնները կը նշանակեն: Կողպէքները մեր հաւատքը կը ցուցնեն: Բանալին՝ սէրը: Տակաւին դռնապանը Պետրոսը կը նշանակէ: Քահանաները հոգին ու մարմինը կը նշանակեն, որոնք պաշտամունքի կրկին դասերով հրեշտակներուն հետ զԱստուած կը փառաբանեն: Իսկ անոնք, որոնք եկեղեցիներ կ'օրհնեն, կը յայտնեն, թէ այս տունը Աստուծոյ [տունն] է, իսկ թշնամին կը հաւածէ, որպէսզի այստեղ չմտնեն եւ աղօթքով Աստուծոյ զօրութիւն չառնեն, որովհետեւ բժիշկ կ'ըլլան հիւանդներուն եւ մեղուցեալներուն, եւ զԱստուած միշտ այստեղ կը տեսնեն: Իսկ տաճարը սրբելը (օծելը)՝ որպէսզի ցոյց տրուի, թէ անարժանները, շունները, պոռնիկներն ու անհաւատները իշխանութիւն չունին Աստուծոյ եկեղեցին մտնելու, այդ պատճառով մտնելու պարագային դարձեալ կ'օրհնեն, որպէսզի սրբութիւնը

⁵⁸ Եւր. ԺԲ. 11:

⁵⁹ Հմմտ. Ես. 49. 2:

⁶⁰ Յովհ. Ժ. 9:

շուներուն շտրուի⁶¹, իսկ մենք պատրաստ ըլլանք եկեղեցւոյ մէջ, իբրեւ Աստուծոյ տուն, անոր նմաններն այնտեղ մտցնել: Եւ քանի որ անօրէնները, բռնութեամբ մտնելով, սրբութիւնը քակեցին, այդ պատճառով դարձեալ շինելով՝ դարձեալ պէտք է նաւակատիք կատարել: Այս բոլորը նախապէս տեսնելով՝ մարգարէն կ'աղաղակէ. «Տէ՛ր, սիրեցի տանդ վայելչութիւնը եւ փառփղ բնակութեան վայրը»:

Իսկ իններորդ՝ «տուն» կը կոչուին Քրիստոսի հաւատացեալները՝ Անոր կամարարները:

Եւ գիտելի է, թէ ինչքան որ սուրբերն ու կամարարները մաքրութեամբ Աստուծոյ «տուն» կը կոչուին, նոյնքան չարերն ու մեղաւորները սատանային տունն են: Իսկ սուրբերը բազմաթիւ վայելչութիւն ունին:

Նախ՝ որովհետեւ կը հաւատան աստուածային խօսքերուն՝ ըստ այնմ. «Ով, որ կը հաւատայ Ինծի, մահ պիտի չտեսնէ»⁶²:

Երկրորդ՝ քանի որ կը սիրեն զինք ամբողջ սիրտով ու Անոր պատուիրանները կը պահեն, այդ պատճառով Քրիստոս կու գայ անոնց մօտ՝ ըստ Իր խօսքին. «Ես ո՛ւր պիտի հանգստանամ, եթէ ոչ հեզերուն մէջ»⁶³:

Երրորդ՝ որովհետեւ առանց երկմտութեան Աստուծոյ կը յուսան, այդ պատճառով ալ կ'առնեն՝ ինչ որ կը կամենան՝ ըստ այնմ. «Ով յոյսը Տիրոջ վրայ դրած է, յաւիտեան չի՛ սասանիր, ինչպէս Սիոնի լեռը»⁶⁴:

Չորրորդ՝ քանի որ մարմինի մաքրութիւն ունին, որով գերազանց են, քան հրեշտակները:

Հինգերորդ՝ որովհետեւ սիրտի սրբութիւն ունին, որ Աստուծոյ աթոռն է՝ ըստ այնմ. «Երանի՛ անոնց, որոնք սիրտով մաքուր են»⁶⁵:

Վեցերորդ՝ քանի որ ամբողջովին խոնարհ են եւ անոնց մէջ հպարտութիւն չկայ, որով երանութիւն ստացան՝ ըստ այնմ. «Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք երկիրը պիտի ժառանգեն»⁶⁶:

Եօթներորդ՝ որովհետեւ արդար են, այսինքն՝ հաւասարաբաշխ, հոգին ու մարմինին բաժինը տալով՝ ըստ արդարութեան սահմանին:

Ութերորդ՝ քանի որ զօրաւոր են եւ պատրաստ՝ աղօթելու եւ մերկ գետնի վրայ պառկելու:

⁶¹ Տէս Մատթ. է. 6:

⁶² Տէս Յովհ. Ը. 51:

⁶³ Տէս Ես. 42. 2:

⁶⁴ Սաղմ. ԺԻԴ. 1:

⁶⁵ Մատթ. Ե. 8:

⁶⁶ Մատթ. Ե. 6:

Իններորդ՝ որովհետեւ խոհեմներ են, այսինքն՝ իմաստուններ են, որով կեանքի ունայնությունն ուրացան եւ անանցը սիրեցին:

Տասներորդ՝ քանի որ ողջախոհ են ցանկություններու մէջ, որով ստորադասեցին արատաւոր բիծերը, եւ ասոնց մէջ Աստուած կը բնակի: Մեզի ալ արժանի է իրենց նմանիլ՝ ըստ այս բոլորին, որ ըսուեցաւ, որոնց ցանկալով՝ աստուածահայրը⁶⁷, որոնց կցորդ էր ան, կը գոչէր՝ ըսելով. «Տէ՛ր, տանդ վայելչութիւնը սիրեցի»:

Մնաց տասներորդ «տունը», որ է Երկինքի Արքայությունը՝ ըստ այնմ, որ Տէրը կ'ըսէ. «Հօրս տան մէջ բազմաթիւ օթեւաններ կան»⁶⁸: Իսկ առաքեալը կը փակէ ասոր մասին իմացությունը, որովհետեւ կ'ըսէ. «Ուե՛լ աչք չէ տեսած, ուե՛լ ականջ չէ լսած, եւ ուե՛լ մէկուն միտքն իսկ չէ անցած»⁶⁹: Եւ գիտելի է, թէ առաքեալն այն բաներուն մասին կ'ըսէ, որոնք այս զգալի աշխարհին մէջ չեն երեւիր, եւ ճշմարիտ է: Իսկ այն աշխարհի եւ տան վայելչությունը, մեզի Սուրբ Գիրքին մէջէն շատ կ'երեւին:

Նախ՝ Տէրը երեք դասերու զատեց Արքայությունը՝ հարիւրաւոր, վաթսունաւոր, երեսնաւոր⁷⁰, այսինքն՝ կոյսերուն, ողջախոհներուն եւ ապաշխարողներուն:

Երկրորդ՝ որովհետեւ Տէրը կ'ըսէ. «Այն ատեն արդարները Արքայութեան մէջ պիտի փայլին...»⁷¹, որմէ զրկուելով՝ բազմաթիւ կսկիծ կ'երեւայ մեզ վրայ:

Երրորդ՝ քանի որ ինչ որ այս աշխարհի վրայ խեղանդամ, կաղ եւ կոյր ըլլան, այնտեղ հաստատուած անդամներով կ'երեւին, ինչպէս մարգարէն կ'ըսէ. «Այն ատեն կաղը եղջերուի պէս պիտի վազէ, իսկ դժուարախօսներու լեզուները պարզ պիտի դառնան»⁷²: Իսկ միւսը, թէ՛ «Կոյրերուն աչքերը պիտի բացուին, եւ խուլերուն ականջները պիտի լսեն»⁷³:

Չորրորդ՝ որովհետեւ հաւասար հասակով պիտի ըլլան, այսինքն՝ երեսուն տարեկան՝ Տիրոջ մկրտութեան⁷⁴ եւ Ադամի ստեղծման չափով:

⁶⁷ Այստեղ «աստուածահայր» ըսելով՝ նկատի ունի Սաղմոսերգու Դաւիթին, քանի որ Քրիստոս Դաւիթի սերունդէն ծնաւ:

⁶⁸ Յովհ. ԺԴ. 2:

⁶⁹ Ա. Կորնթ. Բ. 9:

⁷⁰ Տէս Մատթ. ԺԳ. 23:

⁷¹ Մատթ. ԺԳ. 43:

⁷² Հմմտ. Ես. ԼԵ. 6:

⁷³ Ես. ԼԵ. 5:

⁷⁴ Ղուկ. Գ. 23:

Հինգերորդ՝ քանի որ իբրեւ Աստուծոյ հրեշտակներ պիտի ըլլան, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Այրերը կիներ պիտի չառնեն, ո՛չ ալ կիները՝ այրեր, այլ իբրեւ Աստուծոյ հրեշտակներ պիտի ըլլան»⁷⁵:

Վեցերորդ՝ որովհետեւ Աստուծոյ կը ծառայեն, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Հօրս սեղանին պիտի նստեցնեմ ու անցնելով պիտի ծառայեմ»⁷⁶:

Եօթներորդ՝ քանի որ իրարու կարօտ չեն, թէեւ շատ քիչ արդար ըլլան, ինչպէս ոչ փոքր աստղերը՝ արեգակի լոյսին, որու օրինակով առաքեալը կ'ըսէ. «Արեգակը եւ լուսինը... պայծառ աստղերը»⁷⁷:

Ութերորդ՝ որովհետեւ զԱստուած դէմ յանդիման կը տեսնեն, ինչպէս առաքեալը կ'ըսէ. «Պիտի տեսնեմ զինք իր իսկութեան մէջ»⁷⁸: Իսկ Տէրը. «Այն ատեն պիտի տեսնեմ Մարդու Որդին՝ ամպերուն վրայ բազմած»⁷⁹: Եւ այն է Արքայութիւնը՝ Աստուծոյ տեսութիւնը:

Իններորդ՝ քանի որ մարմինով սրբնթաց կ'ըլլայ՝ իբրեւ միտքը, որու օրինակով Տէրը կ'ըսէ, թէ՝ «Անգղները կը հաւաքուին հոն, ուր դիակ կայ»⁸⁰:

Տասներորդ՝ որպէսզի յաւիտենական կեանքը ժառանգեն, որ չանցնիր, ինչպէս Տէրը կ'ըսէ. «...Արդարները յաւիտենական կեանքի»⁸¹: Տակաւին, այս աշխարհի դիմակը կ'առնեն, փոխանակ լալու՝ կրկին ուրախութիւն: Իսկ Տէրը կ'ըսէ. «Երանի՛ անոնց, որոնք հիմա կու լան, որովհետեւ պիտի ծիծաղին...»⁸²: Աշխատանքի [յոգնութեան] փոխարէն՝ հանգիստ՝ ըստ այնմ. «Եկէ՛ք Ինձի, դուք բոլոր յոգնածներդ»⁸³: Չարչարանքներու փոխարէն՝ անթառամ պսակը՝ ըստ այնմ. «Ան որ իր խաչը առնէ ու ետեւէս գայ, հաւիտապատիկ պիտի ստանայ եւ յաւիտենական կեանքը ժառանգէ»⁸⁴: Չրկանքներու փոխարէն՝ բազմաթիւ վարձատրութիւն՝ ըստ այնմ. «Երանի՛ ձեզի, երբ նախատեն ու հալածեն ձեզ»⁸⁵: Աղքատութեան փոխարէն՝ հարստութիւն, փարթամութիւն, տակաւին՝ Քրիստոսի հետ աթոռներու վրայ պիտի նստին՝ ըստ այնմ. «Իմ երկրորդ գալուստիս, արթոններու վրայ

⁷⁵ Տէս Ղուկ. Ի. 35–36:

⁷⁶ Ղուկ. ԺԲ. 37:

⁷⁷ Տէս Ա. Կորնթ. ԺԵ. 41:

⁷⁸ Տէս Ա. 3րդ Գ. 2:

⁷⁹ Մատթ. ԻԴ. 30:

⁸⁰ Մատթ. ԻԴ. 28:

⁸¹ Մատթ. ԻԵ. 46:

⁸² Ղուկ. Զ. 21:

⁸³ Մատթ. ԺԱ. 28:

⁸⁴ Տէս Մատթ. ԺԹ. 29:

⁸⁵ Մատթ. Ե. 11:

պիտի նստիք, դատելու համար Իսրայելի տասներկու ցեղերը»⁸⁶։ *Գոյժի փոխարէն՝ երանաւէտ բարբառը*. «Եկէ՛ք Հօրս կողմէ օրհնեալներ եւ ժառանգեցէ՛ք աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած Արքայութիւնը»⁸⁷։ *Տգիտութեան եւ քիչ գիտութեան փոխարէն՝ անշափը՝ ըստ այնմ*. «Ամեն մարդ Աստուծմէ ստրված պիտի ըլլայ»⁸⁸. *Իսկ առաքեալը՝ «Այս անկատարութիւնը վերջ պիտի գտնէ»⁸⁹։ Բանտին փոխարէն՝ անձեռագործ խորանը՝ ըստ առաքեալին*. «Մեր հողեղէն այս տանարը, որ մեր մարմինն է, պիտի փայփայուի, սակայն Աստուծոյ կողմէ պատրաստուած անձեռագործ տանարը ունիմք»⁹⁰։ *Ապականացու մարմինին փոխարէն՝ անապականը՝ ըստ այնմ*. «Կը սերմանո՞ւնք ապականութեամբ եւ յարութիւն կ'առնենք անապականութեամբ»⁹¹։ *Վերջին ըլլալու փոխարէն՝ մեծ համարձակութիւն պիտի ունենան Տիրոջ նկատմամբ՝ ըստ մարգարէին*. «Այն ատեն արդարը մեծ համարձակութեամբ պիտի կանգնի»⁹²։ *Որուն շատոնց ցանկալով՝ մարգարէն, կ'ըսէ*. «Տէ՛ր, տանդ վայելչութիւնը սիրեցի»։

Իսկ դժոխքի տան մէջ ասոնց դիմակը կ'իմացուի, որովհետեւ անոնք, որոնք սանդարամետները կը բնակին.

Նախ՝ այն է, թէ խոր անդունդները կ'իջնեն, որ աստուածային խնամքի անբաւ հեռաւորութիւնը կը ցուցնէ, այդ պատճառով ալ յաւիտենապէս կը տանջուին։

Երկրորդ՝ որովհետեւ յաւիտենականին մէջ կրակի պիտի մատնուին՝ ըստ այնմ. «Անիծեալներ, հեռացէ՛ք Ինձմէ, գացէ՛ք յաւիտենական կրակին մէջ»⁹³։

Երրորդ՝ որդանը, որ չի՛ քնանար՝ ըստ այնմ. «Անոնց որդը չի՛ մեռնիր»⁹⁴։

Չորրորդ՝ աչքերու լացը եւ ակռաներու կրճտոցը, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Այնտեղ լաց պիտի ըլլայ, կամ ուր աչքերու լացն է եւ ակռաներու կրճտոցը»⁹⁵, *եւ այլն*։

⁸⁶ Տէս Մատթ. ԺԹ. 28։

⁸⁷ Մատթ. ԻԵ. 34։

⁸⁸ Յովհ. Զ. 45։

⁸⁹ Ա. Կորնթ. ԺԳ. 10։

⁹⁰ Տէս Բ. Կորնթ. Ե. 1։

⁹¹ Տէս Ա. Կորնթ. ԺԵ. 42։

⁹² Իմաստ. Ե. 1։

⁹³ Մատթ. ԻԵ. 41։

⁹⁴ Ես. ԿԶ. 24։

⁹⁵ Տէս Մատթ. ԻԵ. 30, Ղուկ. ԺԳ. 28։

Հինգերորդ՝ արտաքին խաւարը, որ ո՛չ նիւթէ է, ո՛չ վայրէ է եւ ո՛չ ալ լոյսէ, այլ տանջող էութիւն մըն է, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Կապեցէ՛ք ատոր ոտքերն ու ձեռքերը եւ արտաքին խաւարին մէջ նետեցէ՛ք»⁹⁶:

Վեցերորդ՝ քանի որ տարտարոսի կը մատնուին՝ տանջարանէ մը այլ տանջարան փոխուելով, այդ պատճառով տարտարոս կը կոչուի:

Եօթներորդ՝ որովհետեւ կապուած ձեռքերով ու ոտքերով պիտի ըլլան, ինչպէս Տէրը կ'ըսէ. «Կապեցէ՛ք ատոր ձեռքերն ու ոտքերը»⁹⁷:

Ութերորդ՝ քանի որ Աւագանին շնորհը մէջտեղէն կը կտրեն՝ հեռու արտաքսելով:

Իններորդ՝ որովհետեւ անելանելի բանտը կը նետեն՝ ըստ Տիրոջ, այնտեղէն չես ելլեր մինչեւ յաւիտեան:

Տասներորդ՝ քանի որ անբարեխօս են, որովհետեւ Աստուած չի լսեր անոնց լացը:

Որոնցմէ զարհուրեցէ՛ք, սիրելիներ, եւ չար գործերէ հեռացէ՛ք, որ այնտեղ կը տանին, սրբութիւն գործեցէ՛ք, որպէսզի Աստուծոյ տան վայելութեան հասնիք եւ Աբրահամի գիրկին մէջ հանգչիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, Որուն վայել է փառք:

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԸ



⁹⁶ Հմմտ. Մատթ. ԻԵ. 30:

⁹⁷ Տէս Մատթ. ԻԲ. 13: